

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2005թ. հունվար-մայիսին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 76.7 մլրդ.դրամ, որը 2004թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 2.8%-ով: 2005թ. մայիսի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2005թ. ապրիլի 145.1%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ճյուղերի ունի հետևյալ պատկերը՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 15969.3 մլն. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը 5.7 %-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը կազմում է 60761.3 մլն. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը 2.1 %-ով:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2005թ. հունվար-մայիս	2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, %	2005թ. հունվար-մայիս	2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, %	2005թ. հունվար-մայիս	2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
ք. Երևան	0.1	100.0	1.4	116.7	18.5	95.4
Արագածոտն	3.2	100.0	24.4	110.4	10.2	83.6
Արարատ	2.6	100.0	15.8	109.7	16.0	90.4
Արմավիր	3.5	106.1	13.7	107.9	15.4	89.5
Գեղարքունիք	4.6	100.0	37.6	109.3	16.2	93.1
Լոռի	3.0	103.4	24.8	108.3	10.0	73.5
Կոտայք	3.1	100.0	21.8	112.4	93.2	93.5
Շիրակ	4.1	102.5	31.5	109.4	15.0	93.2
Սյունիք	2.4	96.0	18.0	110.4	5.8	93.5
Վայոց ձոր	1.0	100.0	8.0	106.7	5.1	86.4
Տավուշ	2.2	100.0	14.5	107.4	8.1	93.1
ԸՆԴՊՄԵՆՆԸ ՀՀ	29.8	101.0	211.5	109.5	213.5	91.2

2005թ. հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուծական հիմնական մթերքի արտադրության ծավալները՝ բացառությամբ ձվի ծավալից, ավելացել են: Այսպես՝ իրացված մսի ծավալները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 0.3 հազ. տոննայով, կամ 1.0 %-ով, կաթինը՝ 18.3 հազ. տոննայով կամ 9.5 %-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը: